Պեկին+25. Հայաստանի հանձնառությունները, ձեռքբերումները, մարտահրավերները

Ազգային ժողով - քաղաքացիական հասարակություն համագործակցության հարթակի հանդիպում

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Սույն թվականի հուլիսի 29-ին տեղի ունեցավ Ազգային ժողով-քաղաքացիական հասարակություն հարթակի հերթական հանդիպումը, որը նվիրված էր Պեկին+25 գործընթացներին, որտեղ հատուկ անդրադարձ կատարվեց Պեկինի հռչակագրի և Գործողությունների ծրագրի «Կանայք և զինված հակամարտությունները» առանցքային ոլորտի շրջանակներում Հայաստանի ստանձնած հանձնառություններին:

2020 թվականին լրանում է 25 տարի այն օրվանից, երբ 1995-ին, ավելի քան 17 հազար պաշտոնական պատվիրակներ 189 երկրներից, այդ թվում՝ Հայաստանից, հավաքվեցին Պեկինում՝ Կանանց չորրորդ համաշխարհային խորհրդաժողովում և պարտավորություններ ստանձնեցին միաձայն ընդունված Պեկինի հռչակագրի և Գործողությունների ծրագրի շուրջ: Այսօր այդ պարտավորությունների կատարման շուրջ սկիզբ առած Պեկին+25 գործընթացի շրջանակում Հայաստանն առավել քան ակտիվ դերակատարում ունի, քանի որ 2020-2021թ. հանդես է գալիս որպես նախագահող երկիր՝ ՄԱԿ-ի Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովում: Վերջինս վերահսկող մարմին է Պեկինի գործողությունների ծրագրի իրականացման հարցերում:

Հանդիպմանը մասնակցեցին Ազգային ժողովի պատգամավորներ, Կառավարության և պետական կառույցների ներկայացուցիչներ, քաղհասարակության ներկայացուցիչներ, փորձագետներ:

Հանդիպումն իրականացվում էր «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի կողմից՝ ՀՀ Ազգային ժողովի, ՕքսԵՋԵՆ հիմնադրամի, Մարդկային զարգացման միջազգային կենտրոնի, Ժողովրդավարության Վեսթմինսթր հիմնադրամի հետ համագործակցությամբ: Ծրագիրն իրականացվում է Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամ»-ի և Շվեդիայի կառավարության օժանդակությամբ:

Հանդիպման ժամանակ ներկայացվեց.

- Պեկինի հռչակագրի և Գործողությունների ծրագրի իրականացման համաշխարհային գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն, ինչպես նաև ՀՀ-ի կողմից իրականացվող գործողությունները:
- «Հայաստանում Պեկինի հռչակագրի և Գործողությունների ծրագրի իրականացման վերլուծություն» այլընտրանքային զեկույցի «Կանայք և զինված հակամարտությունները» առանցքային ոլորտին նվիրված բաժինը:
- ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների 2019-2021 թվականների ազգային ծրագրի իրականացման գործընթացի մանրամասները:

I. Պեկինի հռչակագիրը և Գործողությունների ծրագիր. Հայաստան

Փորձագետ Թամարա Հովնաթանյանը ներկայացրեց Պեկինի Հռչակագրի և Գործողությունների ծրագրի 25-ամյա պատմությունը և թե ինչ գործընթացներ են տեղի ունեցել այս տարիների ընթացքում, ինչպիսի առաջնահերթություններ և մարտահարվերներ են սահմանվել և ինչ դերակատարություն է ունեցել Հայաստանը այս գործընթացներում.

<u>Քաղվածքներ ներկայցված նյութից.</u>

- Կանանց հարցերով չորրորդ համաշխարհային խորհրդաժողովին՝ Պեկին, 1995թ., մասնակից են դարձել 47 հազար ներկայացուցիչ 189 պետություններից. 17 հազար պաշտոնական պատվիրակներ և հասարակական կազմակերպությունների 30 հազար ակտիվիստներ: Հայաստանը նույնպես մասնակցություն է ունեցել այս գործընթացներին. 26 մասնակից Հայաստանից՝ պետական պատվիրակության 8 անդամներ և ՔՀԿ ոլորտի 18 ներկայացուցիչներ:

- Պեկինի գործողությունների ծրագիրը ներառում է 12 ոլորտներ, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է ամփոփ վերլուծություն ոլորտային հիմնախնդիրների վերաբերյալ, ռազմավարական նպատակների և գործողությունների նկարագիր: 12 ոլորտներն են՝ աղքատություն, կրթություն, առողջապահություն, բռնություն, զինված

հակամարտություններ, տնտեսություն, որոշումների ընդունում, կանանց դրության ինստիտուցիոնալ մեխանիզմներ, մարդու իրավունքներ, ԶԼՄ-ներ, շրջակա միջավայր, աղջիկներ:

- Պեկին+25-ի կարգախոսն է՝ «Հավասարության սերունդ. իրագործե՛նք կանանց իրավունքները հանուն հավասար ապագայի»

- 2019թ. մարտի 22-ին ՄԱԿ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Միեր Մարգարյանն ընտրվեց Միավորված ազգերի կազմակերպության Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի նախագահ՝ 2020-2021թթ. կայանալիք 64-րդ և 65-րդ նստաշրջանների համար:

- Պեկինի հռչակագրի և Գործողությունների ծրագրի 25-ամյակի կապակցությամբ սեպտեմբերին նախատեսվում է հատուկ նիստ հրավիրել, որին ընդառաջ ընդլայնված քննարկումներ են կազմակերպվում՝ ներգրավելով բոլոր շահագրգիռ կողմերին:

Թեմային վերաբերող առավել մանրամասն տեղեկատվություն՝ հանդիպմանը ներկայացված պրեզենտացիայում.

II. «Հայաստանում Պեկինի հռչակագրի և Գործողությունների ծրագրի իրականացման վերլուծություն» այլընտրանքային զեկույց. մտահոգության ոլորտ՝ «Կանայք և զինված հակամարտությունները»

Փորձագետ Նատալյա Մարտիրոսյանը անդրադարձավ «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագրի շրջանակներում պատրաստված այլընտրանքային զեկույցի «Կանայք և զինված հակամարտությունները» բաժնին, որը ներկայացնում է վերջին հինգ տարիների ընթացքում Հայաստանում զինված հակամարտությունների կանխարգելման և հաղթահարման գործում կանանց իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման ուղղությամբ իրականացվող պետական քաղաքականության ձեռքբերումների և համակարգային խնդիրների ընդհանուր գնահատականը: Զեկույցը ներկայացնում է նաև առաջարկներ՝ ուղղված Կառավարությանը և օրենսդիր մարմնին:

Պեկինի գործողությունների ծրագրի «Կանայք և զինված հակամարտությունները» մտահոգության ոլորտի վեց ռազմավարական խնդիրները վերաբերում են ինչպես կանանց պաշտպանության հարցերին, այնպես էլ կանանց անմիջական մասնակցությանը հակամարտությունների լուծման գործընթացին, ինչը կարևոր է ՀՀ-ում առկա իրավիճակի և երկարաժամկետ կոնֆլիկտների առկայության դեպքում:

Պեկինի գործողությունների ծրագրի «Կանայք և զինված հակամարտությունները» մտահոգության ոլորտին անդրադառնալով՝ բանախոսը կարևորեց նաև ՄԱԿ-ի

Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևն ու դրա ուղղությամբ Հայաստանում իրականացվող գործողությունները: Ամենակարևոր ձեռքբերումների թվում նշվեց ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի իրականացմանն ուղղված Գործողությունների ազգային ծրագրի (ԳԱԾ) ընդունումը: Քննարկման ընթացքում նշվեցին նաև ԳԱԾ-ի իրականացման հետ կապված դիտարկումներ, խնդրահարույց կետեր.

Քաղաքացիական հասարակության կառույցների թերներկայացվածությունը ԳԱԾ-ի իրականացման գործում և այս ուղղությամբ նրանց ծավալուն փորձը և փորձագիտությունը չօգտագործելը կարող է նվազեցնել պլանավորված գործողությունների արդյունավետությունը ծրագրի հաջող իրականացման տեսակետից:

- Ծրագրում առկա «արդյունքային ցուցանիշները» որոշ դեպքերում հստակ չեն ձևակերպված, դժվար չափելի են և հաշվի չեն առնում միջնաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունը: Ցանկալի կլիներ նաև, որ լիներ ավելի համապարփակ և մանրամասն մշտադիտարկման ծրագիր:
- Գործողությունների ազգային ծրագրի հետ կապված ամենամեծ մտահոգությունը պետական բյուջեից ֆինանսավորման բացակայությունն է. ԳԱԾ-ը չի պարունակում հատկացված բյուջե կամ նախահաշիվ: Ակնհայտ է, որ առանց լուրջ ֆինանսական միջոցների ներգրավման դժվար է ակնկալել գործողությունների բարձր արդյունավետություն և նշանակալի արդյունքներ:
- Կարևոր է «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» խնդրի վերաբերյալ հանձնառությունները ինտեգրել առանցքային ազգային և միջգերատեսչական քաղաքականության մեջ և արտացոլել դրանք համապատասխան փաստաթղթերում, պլանավորման և մշտադիտարկման գործընթացներում:

Ուլորտի վերհանված խնդիրների և առաջարկների ամբողջական տարբերակը՝ **զեկույցում:**

III. ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների 2019-2021 թվականների ազգային ծրագրի գործընթացը.

Ի լրումն քննարկող թեմայի, ՀՀ արտաքին գործերի նախարարության Մարդու իրավունքների և հումանիտար հարցերի վարչության պետ Կարինե Սուջայանը ներկայացրեց ՄԱԿ-ի ԱԽ N 1325 բանաձևի վերաբերյալ ՀՀ-ի կողմից իրականացվող գործողությունները:

Տիկին Սուջայանը կարևորեց փաստաթղթի առկայությունը, քանի որ այն.

- Հատուկ ընգծում է կոնֆլիկտային գոտիներում ապրող կանանց ձայնը լսելի դրաձնելու հնարավորությունը, ինչպես նաև Ղարաբաղյան հակամարտության բոլոր փուլերում կանանց ներգրավումը, նրանց ներուժի ծառայեցնելը կոնֆլիկի հաղթահարման գործընթացում: N 1325 բանաձևի կարևորությունն առանձնակի մեծ է Հայաստանի համար, քանի որ այն անդրադառնում է ոչ միայն անդամ պետություններին, այլև ոչ անդամ այն պետություններին, որոնք գտնվում են կոնֆլիկտի դաշտում:
- Հստակեցնում է գործող դերկատարներին, սահմանում է գործողությունների

իրականացման ժամանակացույց և մշտատդիտարկման, վերահսկման մեխանիզմներ:

- Բանաձևի դրույթներում առաջնային կարևորություն տալով կանանց մասնակցությանը՝ անհրաժեշտ է նշել, որ պետական մակարդակում, հատկապես Մինսկի խմբի բանակցային գործընթացներում, կանայք, ցավոք, ունեն զրոյական մասնակցություն:

Հանդիպման մասնակիցները հնչեցրին նաև ԳԱԾ-ի իրականացման հետ կապված մի շարք առաջարկություններ.

- Բարելավել Արտաքին գործերի նախարարության համագործակցությունը ՔՀԿ-ների հետ, քանզի առկա է տեղեկատվության հասանելիության խնդիր պետության կողմից իրականացվող գործընթացների շուրջ, որոնք վերաբերում են խաղաղարարությանը, միջազգային պարտավորությունների շրջանակներում իրականացվող գործընթացներին: Անհրաժեշտ է ստեղծել Նախարարության և ՔՀԿ-ների աշխատանքային հարթակներ, որոնք կհստակեցնեն համագործակցության ձևաչափերը և այն կդարձնեն առավել արդյունավետ:
- Նախաձեռնել քննարկում՝ ներառելով նաև ՀՀ պաշտպանության նախարարությանը, նաև ներքին բարեփոխումների խնդիրների շուրջ, օրինակ կանանց ներգարվվածությանը ուժային կառույցներում, կամ կանանց ժամկետային զինծառայության հարցին:
- Կարևորել նաև ոստիկանության համակարգի բարեփոխումների գործընթացում գենդերային բաղադրիչի ներառումը: Կանանց հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին առաջարկվեց ներգրավվել Ոստիկանության բարեփոխումների ռազմավարության և դրանից բխող 2020-2022 թթ. գործողությունների ծրագրի Համակարգող խորհրդում, կամ համագործակցել այդ խորհրդում ներգրավված ՔՀԿ-ների հետ՝ ապահովելու համար բարեփոխումների գործընթացում գենդերային բաղադրիչը, ինչը նաև համահունչ է «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթին, որտեղ նշված է, որ ոստիկանության բարեփոխումները պետք է ունենան գենդերային բաղադրիչ:

ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ՝

«Հայաստանում Պեկինի Հռչակագրի և Գործողությունների ծրագրի իրականացման **ազգային զեկույց**. հղում

«Հայաստանում Պեկինի հռչակագրի և Գործողությունների ծրագրի իրականացման վերլուծություն» **այլընտրանքային զեկույցը,** որը անդրադառնում է «Կանայք և զինված հակամարտությունները», «Կանայք և տնտեսությունը», «Կանանց կրթությունն ու մասնագիտական պատրաստումը». հղում

Պեկինի հռչակագրի և Գործողությունների ծրագրի ընդունման 25-ամյակին նվիրված **«ՀԱՎԱՍԱՐ» տեղեկագրի** հերթական թողարկում. հղում

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների 2019-2021 թվականների **ազգային ծրագիր**. հղում
Հայաստանում «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի

իրականացման մասին **տեղեկատվական գրքույկ**. հղում

«Գենդերային հավասարություն. Կանանց իրավունքները Պեկինից 25 տարի անց» ՄԱԿ Կանայք-ի զեկույց՝ հիմնված Պեկինի Գործողությունների ծրագրի և Կայուն զարգացման նպատակների ընդհանրացված մոտեցումների վրա. հղում